

ՍԱՂՄՈՍ 27

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Աստծո վրա անվախ վստահության Սաղմոս	Հավատքի բուռն հռչակում	Նվիրման քայլ և ազատության աղոթք (Վստահության երգ)	Փառաբանության աղոթք	Աստծո հետ վախ չկա
<u>MT նախաբան</u> Դավթի Սաղմոս				
27:1-3	27:1-3	27:1	27:1	27:1
		27:2	27:2-3	27:2
		27:3		27:3
27:4-6	27:4-5	27:4	27:4-6	27:4
		27:5		27:5
	27:6	27:6		27:6
27:7-10				27:6q
	27:7-10	27:7-9ա	27:7-9ա	27:7-9ա
27:11-14		27:9բ-10	27:9բ-10	27:9բ-10
	27:11-13	27:11-12	27:11-12	27:11-12
		27:13-14	27:13-14	27:13-14
	27:14			

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա.Սաղմոս 26:8,12, Սաղմ.27:4 և Սաղմ.28:2-ի թեման՝ Աստծո տան մեջ գտնվելու մասին (այսինքն՝ խորանը կամ տաճարը) հնարավոր է այն պատճառն է, թե ինչու են այս Սաղմոսները միասին դրվել: Ինչ որ իմաստով Սաղմոս 27 շարունակում և իրականացնում է Սաղմ.26:1-ի «ՏԻՐՈՋԸ վստահիր առանց վարանելու /գայթելու/» թեման:

Բ. Այս սաղմոսն ունի շատ գեղեցիկ գուգահեռականություն:

Գ. Ոչ ոք հաստատ չգիտի ընթացակարգային չափանիշները, ոչ էլ Սաղմոսների գրքում ներգրավված անձի (անձանց) մասին ինչպես որ մեզ է հայտնի (և ամբողջ ՀԿ-ը): Դա հավատքի կանխատեսադրություն է, որ Հոգին առաջնորդում է խմբագրության և հավաքագրման ընթացակարգը, ինչպես որ Նա արեց Սուրբ Գրքի գրի առնվելու ընթացակարգը:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 27:1-3

¹ՏԵՐՆ իմ լույսն է ու փրկությունը,

Ես ումի՞ց պետք է վախենամ:

ՏԵՐՆ իմ կյանքի գորությունն է,

Ես ումի՞ց պիտի սարսափեմ:

²Երբ չարերը՝ իմ նեղիչներն ու թշնամիները,

Մոտեցան իմ մարմինն ուտելու, սայթաքեցին ու ընկան:

³Եթե վրաս զորաբանակ էլ գա, սիրտս չի վախենա:

Եթե իմ դեմ պատերազմ էլ ծագի,

Մրանում ես վստահ կլինեմ:

27:1-3 Այս Սաղմոսը նկարագրում է, թե ՅԱՀՎԵՆ ինչ է սաղմոսերգուի համար՝

1. լույս – BDB 21, այսինքն՝ սա կարող է վերաբերել՝

ա. խրատին՝ Առակ.6:23

բ. առաջնորդությանը՝ Սաղմ.43:3

գ. ՅԱՀՎԵՆ ներկայությանը՝ Սաղմ.4:6, 44:3, 89:15

դ. կյանք և կենսականություն՝ Հոր 33:28, Սաղմ.36:10, Միքիա 7:8, տես՝ *UBS Ձեռնարկը*, էջ՝ 261:

Լույսի գաղափարը Հին Աշխարհում եղել է հզոր նկարագրություն: Իսավարից պետք էր վախենալ, իսկ լույսը՝ օրհնություն էր: Աստծո նկարագրությունը որպես լույս ուներ մի քանի նշանակություն (տես՝ Ես.60:1, 19-20, Միքիա 7:8 և Հովի.8:12):

2. փրկություն – BDB 447, սա կարող էր նկատի ունենալ՝

ա. ապահովություն՝ Սաղմ.12:5, Հոր 5:4, 11

բ. ազատում՝ Սաղմ.50;23, 69:14, 85:7,9

գ. . . . վեճ՝ Սաղմ.95:1

դ. . . . եղջյուր՝ Սաղմ.18:2

3. ապաստարան – BDB 731 (այսինքն՝ անվտանգ վայր, տես՝ Սաղմ.28:8, 31:2-3, 37:39-40, 2 Թագ.22:31-32):

Սաղմ.27:1-ում՝ 1 և 3 տողերում, չկա «լինել» ԲԱՅԸ: Մյուս ԲԱՅԵՐԸ ԱՆԿԱՏԱՐՆԵՐ են (ինչպես Սաղմ.27:3), որը խոսում է շարունակվող գործողության մասին: Նկատելք Սաղմ.27:2-ում չարագործների, հակառակորդների, թշնամիների վիճակի հետ հակադրությունը: Նրանց կարգավիճակը

(ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐԸ) սահմանված է: Նրանք սայթաքել են և ընկել: ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅԵՐԸ շարունակվում են Սաղմ.27:3: Կյանքն ունի իր փորձությունները, խնդիրները, իրադարձությունները, սակայն Աստված միշտ մեր հետ ու մեր կողմից է:

Ի՞նչ պետք է անեն հավատարիմ հետևորդները այս ընկած աշխարհում կյանքի փորձառությունների լույսի ներքո՝

1. չվախենան, Սաղմ.27:1, 3 (BDB 431, KB 432, *Qal* ԱՆԿԱՏԱՐ)
2. չսարսափել, Սաղմ.27:1 (BDB 808, KB 922, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ.118:6, Հռոմ.8:31)
3. վստահ լինել, Սաղմ.27:3 (BDB 105, KB 120, *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ

Ճշմարիտ հավատքը Աստծո հետ անձնական փոխհարաբերություն է, մի նոր աշխարհայացք, նոր ապրելակերպ (տես՝ Հռոմ.8:31-39): Այս բոլորը հնարավոր է Աստծո բնավորության և հայտնության շնորհիվ: Նա մեր հետ և մեր կողմից է և ուզում է ամենօրյա անձնական փոխհարաբերություն ունենալ մեր հետ, անգամ այս ընկած աշխարհում գտնվող մեղավոր մարդկանց հետ:

27:2 Ուշադրություն դարձրեք հակառակորդներին նկարագրող կիրառված տարբեր բառերին՝

1. չարագործներ՝ Սաղմ.27:2 – BDB 949, KB 1269, *Hiphil* ԴԵՐԲԱՅ
2. նեղիչներ՝ Սաղմ.27:2, 12 – BDB 865 III
3. թշնամիներ՝ Սաղմ.27:2, 6 – BDB 33, KB 38, *Qal* ԴԵՐԲԱՅ

Ասվում է, որ նրանք «սայթաքեցին» և «ընկան» (տես՝ Երեմ.50:32): Երկուսն էլ *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐ են: Նրանց ճակատագիրն ու դատաստանը դիտարկվում են արդեն իսկ տեղի ունեցած: Նրանց կործանումը հաստատ է:

❖ «**իմ մարմինը ուտելու**» TEV տալիս է «ինձ սպանելու» և սա է այս դարձվածքի շեշտադրությունը (տես՝ Սաղմ.14:4): Հնարավոր է սա ակնարկում է չարագործների գործողությանը ինչպես վայրի գիշատիչների:

RSV թարգմանությունը կարծում է, որ սա նշանակում է «գրպարտել» (այսինքն՝ «չարախոսություն», հիմնված Դան.3:8-ի վրա), սակայն NRSV տարբերակը կիրառում է ավելի տառացի թարգմանություն:

27:3 Այս համարը խիստ ակնարկում է, որ սաղմոսերգուն թագավոր է: Սաղմոս 1-41 համատեքստը ներկայացնում է, որ դա հենց Դավիթն է:

Ուշադրություն դարձրեք «գորաբանակ» (גוראנ, BDB 334) և «շրջապատի» (תגור, BDB 333) բառերի միջև բառախաղը: Նմանօրինակ հնչյունային բառախաղերը հաճախ են հանդիպում եբրայական պոեզիայում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 27:4-6

⁴ՏԻՐՈՉԻՑ մի բան եմ ցանկանում ու այս եմ խիստ փափագում,

Որ կյանքիս բոլոր օրերին ՏԻՐՈՉ տան մեջ բնակվեմ՝

ՏԻՐՈՉ վայելչությունը տեսնելու ու Նրա տանարում

Նրան փնտրելու համար:

⁵Քանի որ նեղության ժամանակ ինձ Իր խորանում է թաքցնելու,

Իր վրանի գաղտնարանում է թաքցնելու ինձ,

Վեմի վրա է հաստատելու ինձ:

⁶Ու այնժամ իմ գլուխը բարձրանալու է իմ շուրջբոլորը եղող թշնամիներից .

Դրա համար Նրա վրանում ուրախության զոհեր եմ մատուցելու,

Երգելու եմ, փառաբանություն եմ երգելու ՏԻՐՈՉԸ:

27:4-6 Սաղմոսերգուն թվարկում է մի շարք աղոթքի խնդրանքներ: Նկատելք ՎԱՂԱԿԱՏԱՐ և ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅԵՐԻ գուգահեռները:

1. «ես խնդրել եմ» - BDB 981, KB 1371, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, որը արտահայտում է ավարտված գործողություն

2. «ես փնտրելու եմ» - BDB 134, KB 152, *Piel* ԱՆԿԱՏԱԲ, որն արտահայտում է շարունակվող ջերմեռանդ աղոթքի կյանք

Սաղմոսները մեկնաբանելիս մենք պետք է հիշենք, որ այս խնդրանքները ծառայում էին երկու գործառույթների:

1. դրանք արտացոլում են հավատարիմ հետևորդի սիրտը և միտքը (այսինքն՝ նոր աշխարհայացքը, տես՝ Եզեկիել 36:22-38):

2. դրանք հակադրվում և հստակ հայտնում են սուտ հետևորդների սիրտն ու միտքը:

Նրանք, ովքեր հակառակվում են Աստծո առաջնորդներին՝ հակառակվում են Աստծուն: Ոչ թե վրեժխնդրություն էր փնտրվում, այլ արդարություն և ՅԱՀՎԵԻ բնավորության հայտնություն:

27:4 Ուշադրություն դարձրե՛ք ջերմեռանդ խնդրանքներին՝

1. որ բնակվեմ (*Qal* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ) ՏԻՐՈՉ տան մեջ կյանքիս բոլոր օրերում (տես՝ Սաղմ. 23:6)

2. տեսնեմ (*Qal* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ, հաճախ կիրառվում է մարգարեի տեսիլքների համար, BDB 302) ՏԻՐՈՉ գեղեցկությունը (տես՝ ստորև տրված գրառումը):

3. փնտրեմ (*Piel* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ) Նրա տաճարում



NASB, NKJV, NRSV, JPSOA, REB

NASB լուսանցք

LXX

TEV

NJB

«գեղեցկությունը»

«սքանչությունը»

«հաճությունը»

«բարությունը»

«քաղցրությունը»

Եբրայերեն բառը (BDB 653) հիմնականում նշանակում է «հաճելի», «սքանչելի»: Այս ԳՈՅԱ-ԿԱՆԸ հիմնականում կիրառվում է Առակաց գրքում և նկարագրում է մի քանի տարբեր բաներ: Տաճարի համատեքստում այն կարող է նկատի ունենալ Աստծո տեսիլք կամ հանդերձյալ կյանք: Այն կարող է համագոր լինի «բարությանը» (BDB 375) համար 13-ում, որը նաև արտահայտում է Աստծո հետ կատարյալ միջավայր:

Ահա Առակացում այս տերմինի կիրառության օրինակներ՝

1. ԳՈՅԱԿԱՆ՝ Առակ. 3:17, 15:26, 16:21

2. ԱԾԱԿԱՆ՝ Առակ. 22:18, 23:8, 24:4

3. ԲԱՅ՝ Առակ. 2:10, 9:17, 24:25

27:5 Նրա աղոթքի արդյունքները այսպիսին են՝

1. ՅԱՀՎԵՆ կծածկի (BDB 860, KB 1049, *Qal* ԱՆԿԱՏԱԲ) նրան Իր խորանում (տես՝ Սաղմ. 76:2) իր նեղության օրը:

2. ՅԱՀՎԵՆ կթաքցնի (BDB 711, KB 771, *Hiphil* ԱՆԿԱՏԱԲ) նրան Իր վրանի գաղտնարանում:

3. ՅԱՀՎԵՆ կբարձրացնի/կհաստատի իրեն (BDB 926, KB 1202, *Polel* ԱՆԿԱՏԱԲ) վեմի վրա (այսինքն՝ հենց ՅԱՀՎԵԻ վրա):



Հետաքրքիր է արդյո՞ք հրեաներն այս համարը մեջբերում էին նախքան՝

1. Բաբելոնի, Եգիպտոսի և Նեո-բաբելոնի ժամանակ տաճարի անկումը

2. Անտիոքոս IV Էպիֆանեսի (թ. Ա. 175-164թթ.) կողմից տաճարի մեջ ներխուժումը

3. Հռոմեացիները նվաճեցին տաճարը Տիտոսի օրոք (մ. թ. 70թ)

Մենք պետք է հիշենք, որ սուրբգրային խոստումները ազդեցություն են թողնում միայն՝

1. հավատարիմ հետևորդների վրա

2. պատմության մեջ Աստծո ավելի ընդարձակ նպատակների լույսի ներքո

27:6 Քանի որ ՅԱՀՎԵՆ սաղմոսերգուի աղոթքներին պատասխանեց այսպիսի հրաշալի կերպերով (այսինքն՝ «իմ գլուխը բարձրացնելու իմ շուրջբոլորը եղող թշնամիներից»)

1. նա զոհեր է մատուցելու ուրախության աղաղակներով (բառացի՝ «ուրախության աղաղակների զոհեր», նմանատիպ համարները ակնարկում էին հրեաների կողմից կատարվող բանավոր զոհին՝ իրենց տաճարի կործանումից հետո, որով ցույց էին տալիս, որ ամենամյա զոհերն այլևս հնարավոր չէին)
2. Նա փառաբանություններ է երգելու ՅԱՀՎԵԻՆ

Գոյություն ունեն երեք ԸՂՁԱԿԱՆ ԲԱՅԵՐ այս համարում: Սաղմոսերգուն հավատում է, որ նա լինելու է ՅԱՀՎԵԻ ներկայության մեջ (այսինքն՝ տաճարում):

1. ես զոհ եմ մատուցելու – BDB 256, KB 261, *Qal*
2. ես երգելու եմ – BDB 1010, KB 1479, *Qal*
3. փառաբանություններ եմ երգելու – BDB 274, KB 273, *Piel*

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 27:7-10

⁷Լսի՛ր, ՏԵՐ, իմ ձայնը, երբ կանչում եմ .

Ողորմի՛ր ու պատասխա՛ն տուր ինձ:

⁸Երբ ասացիր . «Փնտրեցե՛ք Իմ երեսը»,

Իմ սիրտը Քեզ ասաց . «Քո երեսն եմ փնտրելու, ո՛վ ՏԵՐ»:

⁹Քո երեսը մի՛ ծածկիր ինձնից,

Բարկությանը ծառայիդ մի կողմ մի՛ հրիր .

Դու ես իմ օգնությունը, ինձ մի՛ մերժիր,

Ինձ մի՛ լքիր, ո՛վ իմ փրկության Աստված:

¹⁰Եթե անգամ հայրս ու մայրս ինձ լքեն,

ՏԵՐՆ ինձ կընդունի:

27:7-10 Հաճախ Սաղմոսներում առանձին պարբերություններ կրկնում են շեշտադրությունը կամ նախորդ պարբերությունների թեման: Սա կարելի է բացատրել որպես՝

1. նպատակային գուգահեռականության մեկ այլ մակարդակ
2. խմբագրական գործընթաց՝
 - ա. բառերի միջոցով
 - բ. թեմաների միջոցով
 - գ. եղանակների միջոցով
 - դ. գործողությունների միջոցով

որոնք նման են հնչեղությանը, իմաստով կամ աստվածաբանությամբ, որ հավաքագրված են հետագա խմբագիրների կամ հավաքագրողների կողմից:

27:7 «լսիր . . . կանչում եմ» Առաջինը *Qal* ԱՆԿԱՏԱՐ է (BDB 1033, KB 1570), շատ տարածված Սաղմոսներում որպես Աստծուն աղաչելու կերպ: Երկրորդ ԲԱՅԸ «կանչել» (BDB 894, KB 1128, *Qal* ԱՆԿԱՏԱՐ), նույնպես արտահայտում է աղոթք: Այս համարը կրկնում է Սաղմ. 27:4-ի շեշտադրումը:

Աղոթքի խնդրանքի համատեքստը հետևյալն է՝

1. ողորմի՛ր – BDB 335, KB 334, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. պատասխանի՛ր ինձ – BDB 772, KB 851, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

27:8 Ուշադրություն դարձրեք, որ NASB և NKJV տարբերակներն ունեն շեղատառերով ներածական արտահայտություն (այսինքն՝ «Երբ Դու ասացիր»), որը նկատի ունի, որ սա երբայական տեքստի մաս չի կազմում: NRSV և NJB թարգմանությունները ենթադրում են, որ խոսողը հենց սաղմոսերգուն է:

«Փնտրել» ԲԱՅԸ (BDB 134, KB 152) կրկնվում է՝

1. առաջինը որպես բացում *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (ՀՈԳՆԱԿԻ)
2. երկրորդը *Piel* ԱՆԿԱՏԱՐ (ԵՉԱԿԻ, Սաղմ. 27:8-ի բացման ԲԱՅԸ նույնպես ԵՉԱԿԻ է):

Սա կարծես թե ներկայացնում է ՅԱՀՎԵԻ ու սաղմոսերգուի միջև երկխոսություն: Մեկը կանչում է և մյուսը տալիս տեղին պատասխան: «Փնտրել» ԲԱՅԸ ցույց է տալիս անձնական փոխհարաբերության կոչ (տես՝ Սաղմ. 24:6, 2 Օր. 4:29), որն արտահայտում է երկրպագություն և հնազանդություն: Այս Սաղմոսում աղոթքի վրա շեշտադրության պատճառով, հնարավոր է Սաղմ. 27:4 և 7-ը լինեն գուգահեռներ:

❖ «երես» Սա երբայերեն դարձվածք է մտերմիկ անձնական կապի մասին (տես՝ Սաղմ. 24:6), որտեղ երկուսն էլ թե՛ «փնտրելը», և թե՛ «երեսը» միասին են հանդես գալիս:

27:9 ՀԱՅՅԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ մի շարք գոյություն ունի, որն արտահայտում է ՅԱՀՎԵԻՑ սաղմոսերգուի կողմից խնդրանքները, թե ինչ չանի՝

1. Քո երեսը մի ծածկիր ինձնից – BDB 711, KB 771, *Hiphil* ՀԱՅՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 69:17, 102:2, 143:7
2. բարկությամբ ծառայիդ մի կողմ մի՛ հրիր – BDB 639, KB 692, *Hiphil* ՀԱՅՅԱԿԱՆ
3. ինձ մի՛ մերժիր – BDB 643, KB 693, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով, տես՝ Սաղմ. 94:14, եթե նրանք չդադարեն հավատարիմ հետևորդ լինելուց (տես՝ Երեմ. 12:7):
4. ինձ մի՛ լքիր – BDB 736, KB 806, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով:

Ուշադրություն դարձրե՛ք այս բոլոր խնդրանքներում առկա անձնական տարրը:

27:10

NASB	«քանի որ»
NKJV	«երբ»
NRSV	«երթե»
TEV	«հնարավոր է»
NJB, JPSOA, REB	«չնայած»
NET Աստվածաշունչ	«երթե անգամ»

Ներածական ԿԱՊԸ (BDB 471-475) ունի լայն ստուգարանություն: Միայն համատեքստը կարող է որոշել նշանակությունը: Ակնհայտ է, որ այս համատեքստը թույլ չի տալիս հստակ թարգմանություն:

❖ «հայրս ու մայրս ինձ լքեն» Սա միևնույն ԲԱՅՆ է, որը կիրառվում էր Սաղմ. 27:9-ում: Չնայած այս արտահայտության թարգմանությունը անհայտ է, նշանակությունը ակնհայտ է: Մարդու ամենամոտ մարդկային ընկերները կամ ընտանիքը կարող են թողնել, սակայն ուխտի Աստվածը երբեք չի թողնի (տես՝ 2 Օր. 31:6, Հեսու 1:5, Ես. 49:15, Եբր. 13:5):

UBS *Ձեռնարկը* (էջ՝ 266) նշում է, որ TEV, NEB, JB այս համարով արտահայտում է տեսական հնարավորություն, որպեսզի խիստ գրական իմաստ հաղորդի, և ոչ թե իրական լրվածության իմաստով է գրված:

Հետաքրքիր է, արդյո՞ք սա արտացոլում է ՅԱՀՎԵԻ խոստումը Դավթին և իր սերունդներին 2 Թագավորաց 7-ում: Հավանաբար Սաղմ. 27:13 կապ ունի 2 Թագ. 7:28-ի հետ:

<p>NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 27:11-14</p> <p>¹¹Սովորեցրո՛ւ ինձ Քո ճամփան, ո՛վ ՏԵՐ, Ու ինձ առաջնորդի՛ր ուղիղ ճանապարհի մեջ՝ Թշնամիներիս պատճառով:</p> <p>¹²Մի՛ մատնիր ինձ իմ թշնամիների կամքին, Քանի որ իմ դեմ սուտ վկաներ ելան, Այնպիսիները, որ դաժանություն են արտաշնչում:</p> <p>¹³<i>Կնվաղեի</i>, եթե չհավատայի, թե տեսնելու եմ Տիրոջ բարություն ողջերի երկրում:</p> <p>¹⁴Սպասի՛ր ՏԻՐՈՋԸ, քա՛ջ եղիր, Ու Նա կգորացնի քո սիրտը: <i>Դարձյալ</i> ասում եմ՝ ՏԻՐՈՋԸ սպասիր:</p>

27:11-14 Այս պարբերությունը սկսում է ավելի շատ աղոթքի խնդրանքներով (Սաղմ.27:11-12), անցում է կատարում հավատքի դավանության (Սաղմ.27:13), և ամփոփում բարի խորհրդով (Սաղմ. 27:14):

27:11-12 Աղոթքի խնդրանքները հետևյալն են՝

1. Սովորեցրո՛ւ ինձ Քո ճամփան – BDB 434, KB 436, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ 25:4-5, 86:11
2. առաջնորդիր ինձ ուղիղ ճանապարհի մեջ – BDB 634, KB 685, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ , տես՝ 2 Օր .5:32-33, 31:29, Սաղմ .5:8, 26:12, 139:24, սա ՀԿ-յան եկեղեցու համար հիմքն է, որը հետագայում կոչվեց «Ճանապարհը», տես՝ Գործք 9:2, 18:25, 19:9, 23, 22:4, 24:14,22, Հովհ . 14:6:
3. ինձ մի՛ մատնիր իմ թշնամիների կամքին՝ ցանկությանը – BDB 678, KB 733, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով

Սաղմոսերգուն այս պարբերության մեջ երկու պատճառ է ներկայացնում իր աղոթքների համար:

1. իմ թշնամիների պատճառով (բառացի՝ «նրանք, ովքեր դարանակալել են իմ համար»), Սաղմ. 27:11
2. սուտ վկաներ են դուրս եկել իմ դեմ, Սաղմ .27:12

27:13 Այս համարն արտահայտում է Սաղմոսերգուի հավատքը («հավատացի» - BDB 52, KB 63, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ) և աշխարհայացքը: Նա հավատում էր, որ զոյություն ուներ՝

1. այս կյանքում արդարություն՝ ՅԱՀՎԵԻ բնավորության շնորհիվ
2. ՅԱՀՎԵԻ հետ ապագա կյանք՝ կենդանիների երկրում (տես՝ Հոր 14:7*12, 13-14, 19:25-27, Սաղմ. 16:10, 49:15, 73:24, 116:8-9, 142:5, Ես .25:8, 26:19, 38:11):

27:14 Սաղմոսերգուի հավատքի և աշխարհայացքի լույսի ներքո նա ուրիշներին հորդորում է՝

1. սպասել ՏԻՐՈՋԸ – BDB 875, KB 1082, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ .25:3, 37:34, 40:1, 62:1,5, 130:5, Առակ .20:22, Ես .8:17, 25:9, 33:2
2. քա՛ջ եղիր – BDB 304, KB 302, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ .31:24
3. թող սիրտդ զորանա – BDB 54, KB 65, *Hiphil* ՀԱՅՑԱԿԱՆ
4. սպասիր ՏԻՐՈՋԸ – BDB նույնը ինչ 1-ին կետը

Որոշ գիտնականներ (տես՝ NIDOTTE, հատոր 1, էջ՝ 439) դիտարկում են Սաղմ .27:14-ը որպես՝

1. ինքնահորդոր (սաղմոսերգուն)
2. քահանայական ճառ ուղղված տաճարին

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչպե՞ս է «վախը» առաջին պարբերության բանալի խոսքը:
2. Սաղմոս 27:2 և Սաղմոս 23:6 հնչում են միատեսակ . ի՞նչ է ակնարկում այս տեսարանը:
3. Արդյո՞ք Սաղմ .27:4-6 խորանի կամ տաճարի մասին է:
4. Ինչո՞ւ է Սաղմ.27:9 այդքան անհանգստացնող: Արդյո՞ք ուխտի Աստվածը լքել է Իր հետևորդներին:
5. Ի՞նչ է նշանակում Սաղմ .27:10: Արդյո՞ք այն բառացի է, թե փոխաբերական իմաստով: